ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ Երևանի Խ. Աբովյանի անվան ՊՄՀ - ի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի ծննդյան 50 և գիտամանկավարժական գործունեության 25 - ամյակը:

1973թ. ավարտելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը՝ Լ. Խաչատրյանը աշխատում է հայրենի Կամոյի շրջանում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Լինելով օժտված մանկավարժ՝ նա մի քանի տարի հմտանում է մայրենիի ուսուցման բնագավառում, միաժամանակ շարունակում դեռևս ուսանողական տարիներից իրեն հետաքրքրող լեզվական իրողությունների գիտական պրպտումները: Իր մանկավարժական փորձի արդյունքների վերաբերյալ մի քանի հոդվածներով հանդես է գալիս «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրում:

Շուրջ 10 տարի զբաղվելով բառերի խոսքիմասային իմաստների տեղաշարժերի հարցերով՝ նա իր գիտական եզրահանգումները 1981թ. ամփոփում է պաշտպանության ներկայացված «Բառերի ձևաբանական իմաստի և արժեքի տեղաշարժերը հայերենում» ատենախոսության մեջ և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Աշխատանքը՝ որպես բառերի ձևաբանական իմաստների պատմական զարգացման ու փոփոխությունների հանգամանալի և համակողմանի ուսումնասիրություն, արժանանում է ՀՍԽՀ մանկավարժական ընկերության առաջին կարգի մրցանակի և 1985թ. որպես մենագրություն տպագրվում լրամշակված տարբերակով:

1982թ. Լ. Խաչատրյանը աշխատանքի է անցնում Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում որպես հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս: 1990թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում: Մինչև այժմ էլ նա այդ ամբիոնի անդամ է և դասավանդում է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, ընդհանուր լեզվաբանություն առարկաները:

Լ. Խաչատրյանը շարունակում է զբաղվել բառերի ձևաբանական իմաստաբանության խնդիրներով: Հետազոտության նյութ դարձնելով հայերենի կայուն կապակցությունների, հատկապես դարձվածքների բաղադրիչների խոսքիմաստային իմաստների փոփոխությունները և անցումները՝ նա հրապարակ է հանում մեկ այլ աշխատություն՝ «Խոսքիմաստային տարարժեքությունը արդի հայերենի կայուն կապակցություններում» վերնագրով, որն էլ ներկայացնելով իբրև դոկտորական թեզ՝ 1997 - ին պաշտպանում է և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Շարունակելով իր ուսումնասիրությունները լեզվի այս բնագավառում՝ նա քննում է նաև գրաբարի ձևաբանական տարարժեքության հարցերը, որի արդյունքում հրատարակում է «Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան» աշխատանքը: Այժմ տպագրության է պատրաստվում այս բառարանի լրամշակված և հարստացված տարբերակը:

Լ. Խաչատրյանը մեծ ակտիվությամբ և մասնագիտական հմտությամբ զբաղվում է նաև հայոց լեզվի ուսուցման և աշակերտների լեզվական գիտելիքների ստուգման մեթոդական խնդիրներով: Նա համահեղինակել է 1992 - ին հրատարակված «Հիսուն հարցարան հայոց լեզվից» ՀՀ - ում իր տեսակի մեջ առաջին թեսթային հարցաշարերի ժողովածուին: Հետագա տարիներին ևս, որպես համահեղինակ, մասնակցել է դպրոցների ավարտական և բուհերի ընդունելության քննությունների հարցարանների ստեղծման աշխատանքներին: Նա համահայկական գործունեություն է ծավալել 1997 և 1999 թթ.՝ գրաբար և հայ հին գրականություն դասավանդելով Հալեպի «Քարեն Եփփե» ճեմարանում:

Լ. Խաչատրյանը 2001թ. ընտրվել է Երևանի պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում: Իր գիտական պրպտումների, տարիների մանկավարժական հմտության, անձնական բարձր պատասխանատվության, պահանջկոտության և աշխատասիրության շնորհիվ այժմ էլ հաջողությամբ շարունակում է ղեկավարել հայագիտական և մանկավարժական կադրերի պատրաստման՝ Հայաստանի Հանրապետությունում հենակետային ամբիոնի աշխատանքները:

Ռաֆիկ Մանուկյան
Բանասիրական գիտությունների թեկնածու

digitised by